գանութեամբ կազմվեցաւ Նորերումս մի առանձին յանձնաժողով մսի թանգութեան առաջն առնելու համար։ Բայց մինչև այսօր Թիֆլիսի չքաւոր ազգաբնակութիւնը չը վայելից մանաժողովի արդիւնքը և միսը յուլիս ամսում դարձեալ չարունակվում է ֆունտը 10 կոպէկով ծախվել։

—

Յուլիսի 29-ին Քամոյեանց եկեղեցու ծխականները հաւաքվեցան Թիֆլիսի առաջնորդարանի մէջ պ. Շարուրովի գործի վրա խորհրդակցելու համար։ Մեր անցեալ համարում տպված տեղեկութիւնները այդ գործի մասին ճիշդ էին։ Յուլիսի 29-ից մի քանի օր առաջն էլ մի ժողով եղաւ առաջնորդարանում նոյն հարցի մասին և ներկայ գտնվածները, որոնց թւում և ինքն Մամբրէն որ նախագահ էր, հիացած էին պ. Շարուրովի առաջարկութիւնից որ նա 60 տարով է կապալով վեր առնում Քամոյեանց եկեղեցու մօտ չինված տունը, խոստանալով իւրաքանչիւր տարի 600 բուբլ վճարել եկեղեցուն։ Քիչ էր մնում որ չնորհակալութիւններ էին յայտնում Շարուրովին և նրան եկեղեցու բարերար համարէին։ Իսկ յուլիսի 29-ին կայացած ժողովի մէջ ամենքը համոզվեցան, որ 12 տարի առաջ Շարուրովի կապված պայմանագիրը Մակար եպիսկոպոսի հետ, օրէնքի ոգուն հակառակ էր։ Շարուրով իր պայմանագրով պարտաւորեցնում էր հոգևոր իշխանութեանը յաւիտենական ժամանակների համար իր պարտականը, իր ստորագրելը լինել։ Չէ կարելի չը զարմանալ ինչ շարժառիթներ կարող էին դրդել Մակար եպիսկոպոսին և կոնսիստորիային կապել Շարուրովի հետ այդ տեսակ հակաօրէնական պայմանագիր, եթէ ոչ նոյն իսկ Մակար եպիսկոպոսի և կոնսիստորականների անձնական շահասիրութիւնը։ Վերջապէս յուլիսի 29-ի ժողովը համոզվեց որ Շարուրովի կոնտրակտը այլ ևս պարտադիր չէ կարող եկեղեցու համար համարվել և ժողովրդի համար աւելի ձեռնտու է ազատել եկեղեցական ինտերէսները Շարուրովի ինտերէսների հետ կապված լինելուց, ուրեմն կամ յետ գնել շինութիւնը, օրինաւոր գնահատութեամբ, կամ ծախել շինութեան տակը եղած հողը նոյն Շարուրովի վրա։ Մենք կարծում ենք որ առաջինը աւելի շահաւէտ է եկեղեցուն։ Այդ համոզմունքին հանելով ժողովը ընտրեց մի յանձնաժողով, որ պէտք է քննի թէ ո՞րը այդ ճանապարհներից աւելի օգտաւէտ է եկեղեցուն և եթէ առնելու լինի եկեղեցին Շարուրովի շինութիւնը, յանձնաժողովը դրամական միջոցների աղբիւրը պէտք է ցոյց տայ նրան առնելու համար։ Յանձնաժողովի անդամներ ընտրվեցան՝ քաղաքագլուխ Ա. Մատինեանց, Ա. Յովհաննիսեան, Դ. Պօղոսեան, Գ. Ալիմեան և Պարգսեան։

—

Տեղ տալով այս համարում օրիորդ Վարդուհու նամակին, մենք սրանով կամենում ենք վերջ տալ այդ թատրօնական մանր բանակռիւին։ Պ. Մատինեանցի նամակը մենք աւելորդ ենք համարում տպել, իսկ օրիորդ Մէլիքեանցի նամակը նոյն հարցի մասին մենք չենք տպում, որովհետև նրա բերած ապացոյցները չատ թոյլ են։ Ի՞նչ կը նշանակեն այդ տեսակ երեխայական խօսքեր։ Լաւ թէկ ստորագրել եմ այդ նամակը, բայց պ. Հովսեանցն է, ինձ ստիպել ստորագրելու։ Ինչպէս կարելի է ստիպել ստորագրելու։ Իսկ պ. Հովսեանց մեզ յայտնեց որ օրիորդի մտքում նամակ տալուը նա չէր մինչև անգամ, ուրեմն ինչպէս կարող էր նա ստիպել օրիորդին ստորագրելու։ Առհասարակ երևում է որ այդ ամբողջ բանակռիւի մէջ կայ մի գօրեղ գործիչ, որ մի քանիներին ստիպում է այսպէս կամ այնպէս խօսել։ այդ գործիչը հայի խնդիրն է։ Մենք այլ ևս ոչ մի նամակ չենք տպի այդ հարցի մասին։ բաւական է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ГОЛОСЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Պ. Պօլսից „Голосъ“ լրագրին գրում են հետևեալը։

Այստեղի շոգեբի պատճառով կատարեալ անգործունէութիւն է տիրում։ Գեստանները թողել են Բոսֆորի ափերը։ Նրանք հեռանում են միայն այն ժամանակ, երբ հերթական նշանաւոր հարցեր չը կան, ուրեմն դրանից կարելի է եզրակացնել որ այժմ քաղաքական անտարբերութիւն է տիրում։

Պետութիւնների դեսպանների ուշադրութիւնը գրաւող յունական խնդիրը կատարելապէս կորցրեց իր նշանակութիւնը. գիջած երկիրները այնքան կանոնաւորապէս են յանձնվում, որ նրանց մասին խօսելն անգամ չարժէ։ Միակ դժուարութիւնը ծագեց Նորերումս թիւրքերի կողմից, որոնք խնդրեցին գործը մի փոքր յետաձգել, մինչև վերջանան բամազանի տօները։

Զերնոգորիական խնդիրը նոյնպէս դժուարութիւններ չէ ծագեցնում, թէպէտ նա վերջնականապէս լուծվելուն մօտ է։ Լրագիրները դարձեալ սկսեցին խօսել ալբանական միութեան մասին, որ ընդգրկում է ալբանական երկրի մի մասը Զերնոգորիային զիջանելու գործին։ Այդ հանգամանքը շատ ձեռնտու է թիւրքերի համար, որոնք գիտեն, թէ մի անշան երկրի պատճառով Զերնոգորիան պատերազմ չի սկսի և մեծ պետութիւններն էլ խիստ միջոցներ չեն գործադրի։

Ուրեմն ոչ յունական և ոչ զերնոգորիական խնդիրները չեն զբաղեցնում Պ. Պօլսի հասարակութեանը։ Այնու ամենայնիւ այդ հանգստութեանը չէ կարելի հաւատալ։ Արևելեան կեանքը լիքն է այնպիսի տարրերով, որոնք կարող են յանկարծակի հրդեհ գցել։ Այդպիսի հրդեհ կարող է ծագել ներքին կամ արտաքին դժուարութիւնների պատճառով։ Առաջին հարցերից հերթականը հայոց հարցն է։ Այստեղի հայերը մեծ յոյս են դրել անգլիական նոր դեսպան Լորդ Դէոֆերինի վրա և, կարծեմ, դեսպանը ճշմարիտ հրաման է ստացել յօգուտ հայերի գործել։ Բայց ի՞նչ է հարկաւոր հայերին։ Նրանց առաջին ցանկութիւնն է՝ ազատվել քիւրդերի հարստահարութիւններից, երկրորդ՝ ունենալ քաղաքական և վարչական այնպիսի կազմակերպութիւն, որ նրանց ապագայ անկախութեան սկիզբը լինի։ Ի հարկէ Բ. Դուռը չէ կարող բաւականութիւն չը տալ հայերի իրաւունքի պահանջներին, որոնք խնդրում են իրանց դէմքի և իրանց ընտանիքի ապահովութիւնը թափառական ցեղերի փայլունք յարձակումներից դէմ։ Թիւրքաց կառավարութիւնը հրամայեց Կ. Պօլիս բերել երևելի շէյխ Իբադուլլահին, որ քիւրդերի մէջ սրբազան անձնաւորութիւն և ամբողջ ժողովրդի առաջնորդ է համարվում։ Նա արդէն հասել է Կ. Պօլիս և կառավարութիւնից յաւ ընդունելութիւն չը գտաւ։ Բայց որովհետև Իբադուլլահ մահմեդական է և թիւրքերը պարտաւոր են նրան պաշտպանել, այդ պատճառով երկու կողմերին հաշտեցնելու համար կառավարութիւնը հրաւիրել է հայերին ներկայացնել իրանց գանգատները, իրան իրաւունք պահելով դատելու, թէ նրանցից ո՞վ է արդար և ո՞վ է մեղաւոր։

Բայց հայերի համար այդքան հեշտ չէ սատակել իրանց ցանկացած քաղաքական վերանորոգութիւնները։ Թէպէտ կիսապաշտօնական „Վակիթ“ լրագիրը մի քանի յօդուածներով քարոզեց բաւական ընդարձակ վերանորոգութիւններ տալ Հայաստանին ֆինանսական և վարչական կողմից, հրաւիրելով և օտար, եւրոպական տարրերին մասնակցել վերանորոգական այդ գործին, բայց միւս լրագիրները „Հակիկաթի“ առաջնորդութեամբ, որ պաշտօնական լրագիր է համարվում, ընդդէմ են քրիստոնեաների իրաւունքների այդպէս ընդարձակելուն, որ ապացուցանում է Թիւրքաց կառավարութեան անվճռողականութիւնը։ Թիւրքաց կառավարութիւնը վերջնական վճիռ չէ ընդունել։ Իմ սեփական տեղեկութիւններս ապացուցանում են այդ իրողութիւնը։

Հայոց քաղաքական ձգտումների կենտրոնը հայոց ազգային ժողովն է, որ հայոց պատրիարքի նախագահութեան տակ է գործում և որին մասնակցում են մայրաքաղաքի և դաւառների պատգամաւորները։ Արդէն փոքրուց գոյութիւն ունեցող այդ ժողովը վերանորոգվեցաւ քսան տարի առաջ և հայերի համար միշտ ներկայացրել է սահմանադրական կառավարութեան սերմեր։ Նա երկու կուսակցութիւնների է բաժանված, որոնցից մէկը մանուկ կուսակցութիւն է անուանվում և կազմված է ինտելիգենցիայից՝ պրոֆեսորներից, գրագէտներից և այլն, իսկ միւսի անդամները հարուստ կալուածատէրեր և աշխարհականներն են։ Պահպանողական կուսակցութիւնը երկար ժամանակ յաղթող էր և նախկին պատրիարքի անկումը հետևանք էր նրա ձգտումների՝ ընթացք տալ ազատամիտ ուղղութեանը։ Այժմեան պատրիարքի ընտրութիւնը այն ժամանակ յեսատիմութիւն էր համարվում և մեկնվում էր նրա լուսաւոր գործունէութեամբ իր ազգի համար և անդադար աշխատանքներով ուսումնարաններ, հիւանդանոցներ և այլ բարեգործական հիմնարկութիւններ հաստատելու համար։ Այնու ամենայնիւ ժամանակի հոսանքը ունեցաւ իր ազդեցութիւնը. ռուս-թիւրքական պատերազմից և Բերլինի կոնգրեսից հայերին տուած յոյսերի ազդեցութեան տակ ազգային ժողովի կազմակերպութիւնը փոխվեցաւ և նորին սրբազնութիւնը ստիպված էր միանալ մանուկ կուսակցութեան հետ, որի հետ այժմ նա անբաժան կապված է։ Բայց որքան պատրիարքը գործում է ազգային ոգով, նոյնքան նա կորցնում է իր կրեդիտը Բ. Դրան առաջ։ Նորերումս ցանկանալով փորձել իր ոյժը և այն պաշտպանութիւնը, որ կարող էր ունենալ իր ազգայիններից կողմից, ներքէս պատրիարքը հրաժարական տուեց։ Ազգային ժողովի ազդեցութիւն ունեցող անդամները միաձայն խնդրեցին պատրիարքից մնալ իր պաշտօնի մէջ և պատրիարքը իր ոյժը փորձելուց յետոյ համաձայնեցաւ մնալ իր պաշտօնի մէջ։

Այժմ ամենքը մի բանի են սպասում։ Հայերը Իւսասատանի վրա Անգլիայից եթէ ոչ աւելի, գոնէ պակաս յոյս չունեն։ Բազմաթիւ հայ ազգաբնակութիւն ունենալով, մենք անտարբերութեամբ չենք կարող վերաբերվել նրանց թիւրքիահպատակ եղբայրակիցների գործերին։ Այնու ամենայնիւ այն հետաքրքրութիւնը, որ մենք ցոյց ենք տալիս Հայաստանի քաղաքական կեանքի վերաբերութեամբ, այն սահմանափակ չէ, որ մենք բացարձակ մատնացոյց անենք այն հարցի լուծմանը, որ մեզ կողմնակի կերպով զբաղեցնում է։ Այդ պատճառով ոչ թէ միայն անաղնիւ, այլ և վնասաբեր կը լինէր զարթեցնել անիրաւ գործելի յոյսեր և մեր հայաբնակ գաւառների մէջ շարժում յարուցանել, որ կարող է մեզ մեր ցանկացածից աւելի հեռու առնել։ Կարծում ենք, որ մեր գերը պէտք է սահմանափակվի միջնորդութեամբ թիւրքաց կառավարութեան և նրա հպատակ հայ ազգաբնակութեան մէջ։

—

ՊՕՐՏՈՒԳԱԼԻԱ

—

Շատ հպիւ է պատահում որ մեր լրագիրներում երևային յօդուածներ Պօրտուգալիայի մասին։ Այդ երկիրը կարծես մոռացված է քաղաքակրթութեան մէջ, բայց այս դպէպս նրա մէջ կատարվում է մի հետաքրքիր շարժում, որ իր վրա ամբողջ քաղաքական աշխարհի ուշադրութիւն է դարձնում։

Առհասարակ այն օրից երբ Ֆրանսիայում հաստատվեցաւ հանրապետութիւնը, նրան ազգակից, բոմանական ցեղին պատկանող միւս ազգերի մէջ, Իտալիայի, Սպանիայի և Պօրտուգալիայի մէջ երևան եկան հանրապետական սկզբունքը պաշտպանող անձնաւորութիւններ։ Սպանիան, ինչպէս յայտնի է, արդէն հրատարակվեցաւ հանրապետութիւն, բայց շուտով կրկին վերադարձաւ միապետական սկզբունքին։ Իտալիայում օրից օր աւելի ոյժ է ստանում և ամբողջ երկրում ընդարձակվում է հանրապետական կուսակցութիւնը։

Նոյն երևոյթը, աւելի էլ նշանաւոր կերպով, նշմարվում է այժմ և Պօրտուգալիայում։ Պէտք է ասել, որ Պօրտուգալիան շատ մեծ ազատութիւններ է վայելում։ Լրագրութիւնը կատարելապէս ազատ է այդ երկրի մէջ և կառավարութիւնը այն համոզմունքի է, որ քանի աւելի կը հալածվի այս կամ այն լրագիրը կամ գիրքը, նա աւելի էլ կը կարդացվի հասարակութիւնից, քանի աւելի կը ծնշվի միտքը, նա աւելի համակրողներ կունենայ։

Նորերումս պօրտուգալացի մի ազգային բանաստեղծ Գամէս Լէալ հրատարակեց մի պամֆլետ, որի մէջ գեղեցիկ ոտանաւորներով նկարագրված էին երկրի ամենաբարձր անձնաւորութիւնները, նրանց ձգտումները, նրանց գործունէութիւնն ու արած զեղծումները։ Պամֆլետը կարդացվեցաւ, բայց շուտով նրան մոռացան, երբ յանկարծ կառավարութիւնը արգելեց այդ գիրքը, կալանաւորեց ոչ թէ միայն գրուածքը, բայց և իրան հեղինակին։ Պամֆլետը իսկոյն նորից նշանակութիւն առացաւ, նրան կրկին սկսեցին կարդալ, գրքի նոր երևսուն հրատարակութիւններ լոյս տեսան, գիրքը տարածվեցաւ ամբողջ Պօրտուգալիայում և նրան սկսեցին կարդալ այն մարդիկ, որոնք առաջ Լէալի հեղինակութեան վրա բոլորովին ուշադրութիւն չէին դարձնում և չէին էլ ճանաչում այդ բանաստեղծի զբրուածները։ Պօրտուգալիայի ամբողջ մամուլը վրդովմունքի մէջ ընկաւ և ոչ թէ միայն ազատամիտ և պրոտեստական ուղղութեան լրագիրները բողոքում էին Լէալի գրքի արգելման և հեղինակին կալանաւորելու դէմ, բայց մինչև անգամ պահպանողական և կիսապաշտօնական լրագիրները պարսաւում էին կառավարութեանը, ասելով որ երբէք չը պէտք է ճնշել միտքը, արգված խօսքը, ինչքան էլ, իրանց տեսակէտից, հակակրական լինէր իր բովանդակութեամբ յիշված պամֆլետը։ Ինչքան աւելի կը ճնշէք միտքը, ասում էին մինչև անգամ պահպանողական լրագիրները, այնքան նա աւելի նշանակութիւն կը ստանայ։ Կառավարութեան վարմունքը ամեն կողմից անտակտութիւն անուանվեցաւ և նա ստիպվեցաւ յետ առնել իր հրամանը, բանտարկած բանաստեղծին ազատել և պամֆլետի տարածվելը կրկին թոյլ տալ։ Կառավարութիւնը, ուրեմն յետ քաշվեց ամբողջ ազգի հասարակական կարծիքի առջև։

Նշանաւոր է այն որ հանրապետական կուսակցութիւնը Պօրտուգալիայում օրից օր աւելի ոյժ է ստանում։ Այդ կուսակցութեան առաջնորդներից մին թէոֆիլ Բրագա հրատարակեց նորերումս մի գիրք, որի մէջ խստութեամբ քննադատում է Պօրտուգալիայի ներկայ թագաւորական ցեղը և նրան վերաբերում է այն բոլոր անօրինութիւնները և գժբաղդութիւնները, որոնց կրում է երկիրը։ Հանրապետական կուսակցութիւնը թէև դեռ իր ներկայացուցիչներ գրեթէ չունի Լիսաբոնի պարլամենտում, բայց առաջիկայ ընտրութիւններին յոյս ունի բազմաթիւ ներկայացուցիչներ ունենալ պարլամենտի նստարանների վրա։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ